Մայիս ամսվա լրատու

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Երևանի կենդանաբանական այգու նորությունները

Նոր տարեշրջանի բացմանը զուգահեռ Երևանի կենդանաբանական այգին ներկայացավ մի քանի հաճելի անակնկալներով.

• Հանգստի նոր վայր, որը գտնվում է գետաձիերի հարևանությամբ, ընդգրկում է շուրջ

120 քմ ծաղկապատ տարածք և հնարավորություն է ընձեռում հետևել Հայկական մուֆլոնների տեղաշարժին:

• Երևանի կենդանաբանական այգու նոր քարտեզ, որն այցելուներին հնարավորություն կտա ավելի արագ կողմնորոշվել այգում, գտնել կրթական, զվարճանքի կենտրոնները, խաղահրապարակները, ինչպես նաև կենդանիների վանդակներն ու ազատավանդակները: Քարտեզն ունի հստակ տարբերանշաններ և գույներ, որի օգնությամբ ցանկացած տարիքի այցելու կարող է հեշտությամբ գտնել իր նախընտրած վայրը:

• Երևանի կենդանաբանական այգու նոր կանգառի բացում, որը գտնվում է մետրոյի

Երիտասարդական կայարանի հարակից տարածքում: Կանգառը կառուցվեց Երևանի քաղաքապետարանի և HSBC Հայաստան բանկի աջակցությամբ, որտեղից այսուհետ այցելուները կարող են հարմարավետ և անվճար ավտոբուսով օրական 8 անգամ տեղափոխվել Երևանի կենդանաբանական այգի: Ավտոբուսի տոմսի արժեքը ներառում է այգի մուտք գործելու տոմսի գինը, ինչը հնարավորություն կընձեռի բոլոր այցելուներին խուսափել կայանատեղերի բացակայությունից և հնարավոր հերթերից:

• QR կոդերի կիրառում, որը նորագույն տեխնոլոգիաների կիրառման միջոցով կենդանիների անձնագրավորման գործընթացն է: Չիպերում կպահպանվեն յուրաքանչյուր կենդանու բժշկական տվյալները, իսկ համակարգը կմիանա կենդանաբանական այգիների համաշխարհային ցանցին: Անձնագրավորումը կենդանիների տեղափոխման և փոխանակման գործընթացին միանալու միակ օրինական ճանապարհն է, որը նաև Եվրոպական կենդանաբանական այգիների և ակվարիումների (EAZA) լիարժեք անդամ դառնալու նախապայմանն է:

• Մայիսի 1-ին Երևանի կենդանաբանական այգին ներկայացրեց նաև իր նոր՝թարմացված վեբկայքը: Ի տարբերություն նախորդի՝ նոր կայքն ունի բազմաթիվ հետաքրքրաշարժ բաժիններ և նոր անկյուն՝ նախատեսված փոքրիկների համար, ուր կներկայացվեն Զու ամսագիրը, կենդանիների կերակրման ժամերը, ավտոբուսի ժամատախտակը, ինչպես նաև տարաբնույթ ինտելեկտուալ, հետաքրքիր խաղեր և հաճելի անակնկալներ:

Կենդանիների լուսանկարների ցուցահանդես-վաճառք

Քսանչորսամյա Ալեքս Թարվերդին, ով մասնագիտությամբ աշխարհագետ է, իր կյանքի 23 տարիներն ապրել է Լոնդոնում: Շուրջ 6 ամիս աշխատել է Լոնդոնի կենդանաբանական այգում որպես կամավոր: Ուսանողական տարիներին շատ է ճանապարհորդել և լուսանկարել, սակայն անգամ չի էլ պատկերացրել, որ ապագայում լուսանկարչությունը դառնալու է իր աշխատանքի բաղկացուցիչ մասը: 2012-ի մարտից տեղափոխվել է Հայաստան և մինչև հոկտեմբեր Երևանի կենդանաբանական այգում աշխատել որպես կամավոր: Անցած տարվա նոյեմբերից այգու վեբ կայքի համակարգողն ու լուսանկարիչն է:

Մայիսի 12-ին Գրին Բին սրճարանում տեղի ունեցավ Ալեքսի կատարած լուսանկարների առաջին ցուցահանդես-վաճառքը, որը կազմակերպվել էր Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից:

«Դեռևս փոքրուց անչափ սիրել եմ հետևել կենդանիների վարքագծին, իսկ այգում աշխատելով՝ հնարավորություն ունեցա նաև լուսանկարներիս միջոցով հանրությանը ներկայացնել այգու կենդանիների ներաշխարհը ,-նշում է երիտասարդ լուսանկարիչը»:

Իր լուսանկարներում Ալեքսը ներկայացրել է կենդանաբանական այգու գրեթե բոլոր կենդանատեսակներին սակայն դժվարանում է առաձնացնել որևէ մեկին՝ նշելով, որ բոլոր կենդանիներն էլ յուրօրինակ են իրենց վարքագծով և բնավորությամբ:

Ցուցահանդեսին ներկա էին Հայաստանում Նորվեգիայի պատվո հյուպատոս Թիմոթի Սթրեյթը, Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Հեֆերնն իր տիկնոջ հետ, երգիչ-երգահան Արթուր Իսպիրյանն իր տիկնոջ հետ, մի շարք արվեստագետներ, դիվանագետներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք:

Ցուցահանդեսի այցելուները կարող են ձեռք բերել կենդանիների լուսանկարները «Հայրենիքի զարգացման նախաձեռնություն» հիմնադրամի ձեռագործ տիկնիկների հետ միասին՝ յուրաքանչյուրի համար նվիրաբերելով 15 000 ՀՀ դրամ:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչև հունիսի 9-ը՝ Գրին Բին սրճարանում, որը գտնվում է Ամիրյան 10 հասցեում:

Բարի լուրեր

Մայիսին Երևանի կենդանաբանական այգում ծնվել են հայկական մուֆլոններ (Ovis orientalis gmelinii): ԲՊՄՄ Կարմիր ցուցակի չափորոշիչներով՝ այս ենթատեսակը գնահատվում է որպես «Վտանգված»: Հայկական մուֆլոնների թիվը բնության մեջ չի գերազանցում 250-300 առանձնյակները: Ենթատեսակը Հայաստանում տարածված է Ուրծի, Վայոց ձորի, Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաներում: Չնայած որ այգում բնակվող մուֆլոնները զտարյուն տեսակներ չեն, այնուամենայնիվ հանրությանը ներկայացնելու համար էական նշանակություն ունի վերջիններիս բազմացումը: Այս տեսանկյունից դեռ նախորդ տարի մեկնարկած վերարտադրման ծրագիրը, որի նպատակն է վայրի բնության համար հայկական մուֆլոններ բազմացնելը, հաջողությամբ շարունակվում է: Եթե 2011թվականի գարնանը մուֆլոնների թիվը հասնում էր 12-ի, ապա արդեն այսօր այգում բնակվում են 25 մուֆլոններ: Նշենք, որ «թափառող վզնոցով շների» հարձակումը մուֆլոնների վրա, ինչի արդյունքում շները խեղդամահ էին արել երկու թերզարգացած ձագերի և մեկ տարեց մուֆլոնի, ոչնչով չխոչընդոտեց մեկնարկած վերարտադրման ծրագրի հաջող իրականացմանը:

Հավելենք, որ հունիսի 1-ին այգու այցելուները կարող են հետևել հայկական մուֆլոններին և նոր ծնված ձագերին այգու նորաբաց գողտրիկ անկյունից, որը նաև հանգստի կազմակերպման գեղեցիկ անկյուն է:

Հունիսի 1-ին պաշտոնապես կբացվի պտավոր բորենու նոր ազատավանդակը

Հունիսի 1-ը ամբողջ աշխարհում նշվում է որպես երեխաների պաշտպանության միջազգային օր: Երևանի կենդանաբանական այգին կրկին պատրաստել է բազում անակնկալներ իր փոքրիկ այցելուների համար՝ կենդանի երաժշտություն, խաղեր, մրցույթներ, երգ ու պար: Հատկանշական այդ օրը պաշտոնապես կբացվի նաև պտավոր բորենու ընդարձակ՝ շուրջ 650 քմ տարածքով, կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի (EAZA) չափանիշներին համապատասխանող նորակառույց ազատավանդակը: Ազատավանդակը կառուցվել է HSBC Հայաստան բանկի նախկին տնօրեն Ասթրիդ Քլիֆորդի աջակցությամբ: Նոր ազատավանդակն առավելագույնս հարմարեցված է կենդանու կենսապայմաններին. պտավոր բորենին սովոր չէ մեր երկրի ձմեռային ցուրտ պայմաններին, իսկ նորակառույց ազատավանդակն ունի նաև տաքացվող որջ: